Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

21(344)
16.07.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ

Սեպտեմբերի 1-ից Ստեփանակերտի մանկապարտեզների 5 տարեկան սաները կտեղափոխվեն հանրակրթարաններում ստեղծվող նախադպրոցական խմբեր: Դրանք գործելու են դպրոցների տնօրինության տակ, բայց էությամբ լինելու են մանկապարտեզային խմբեր՝ խաղի, ճաշի, որոշ խմբերում՝ նաև քնելու հնարավորություններով:

Հուլիսի 13-ին ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի և շահագրգիռ այլ մարմինների ներկայացուցիչների ուղեկցությամբ ծանոթացավ մայրաքաղաքի դպրոցներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքին: Տեղում քննարկվեցին մեկ հարկի տակ մանկապարտեզի և դպրոցի աշխատանքների կազմակերպմանն առնչվող հարցեր:

Ստեփանակերտի մանկապարտեզների գերծանրաբեռնված վիճակն է պատճառը, որ որոշում է ընդունվել 5 և ավելի տարիքի երեխաների ընդգրկմամբ խմբեր ունենալ դպրոցների հարկի տակ: Սեպտեմբերի 1-ից h. 9, 7, և 2 հիմնական դպրոցների տնօրենները նոր հոգսեր կունենան: Բացվող խմբերն էականորեն տարբերվելու են գործող նախադպրոցական խմբերից: Դրանք զուտ մանկապարտեզի խմբեր կլինեն: Եվ ինչպես ծրագրային, այնպես էլ տեղակայման պայմանները տարբեր կլինեն:

«Կարծում ենք, այս աշխատանքների իրականացմամբ Ստեփանակերտի երեխաների մանկապարտեզ հաճախելու պահանջարկն ինչ-որ չափով կբարելավվի: Նաև դպրոց տեղափոխվելու դեպքում մանկապարտեզներում թափուր տեղեր կառաջանան, և հնարավորություն կունենանք արդեն մինչև 5 տարեկան երեխաների ընդունելությունը մանկապարտեզներ ևս կազմակերպել»,- ասաց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Դպրոցներում հիմա շինարարական աշխատանքներ են կատարվում: Նախատեսվում է մանկապարտեզային խմբերը տեղակայել այնպես, որ երեխաները դպրոցականների հետ առնչություն չունենան: Լինելու են ընդհանուր սենյակներ, խաղասենյակներ, ճաշարան: Այդ նպատակով կվերակառուցվեն նաև դպրոցական ճաշարաններն ու խոհանոցները:

Ս. Ասրյանի տեղեկացմամբ՝ շինարարական աշխատանքներն ավարտման փուլում են, ստեղծված են հարմարավետ պայմաններ, ու նաև համապատասխան գույք ձեռք կբերվի սննդի և քնի կազմակերպման առումով:

Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ բոլոր դպրոցներում խմբերը կբաժանվեն երկու մասի: Մի մասում երեխաները քնելու հնարավորություն կունենան:

«Տեղում որոշվեց, որ ոչ միայն նախադպրոցական խմբեր կլինեն առանց քնելու պայմանների, այլև որոշ դպրոցներում նախատեսվում է կազմակերպել երեխաների և՛ սնունդը, և՛ քնելու համար պայմաններ ստեղծել: Հիմնականում դա կիրականացվի h. 2, 7 և 9 դպրոցներում»,- ասաց Ս.Ասրյանը:

Այսպես ասած, ներդպրոցական մանկապարտեզներում երեխաները կմնան այնքան, ինչքան կնախընտրեն ծնողները: Նախարարի խոսքով՝ եթե երեխաներն ապահովվեն սննդով, կարող են նաև ծնողի ցանկության դեպքում մինչև ժամը 6-ը մնալ, կլինեն նաև երեխաներ, որոնք քնելու անհրաժեշտություն չեն ունենա:

Գործող մանկապարտեզներում 5 տարեկաններին դպրոց տեղափոխելուց հետո լրացուցիչ ընդունելություն չի կատարվելու: Կրթության և գիտության նախարարը զգուշացնում է՝ քայլը կատարվել է մանկապարտեզներում երեխաների թիվը կարգավորելու համար: «Պատրաստ լինելուն պես մենք անպայման հայտարարություն կտանք, թե որ դպրոցում քանի տեղ կա, նրանցից քանիսն են քնելու տեղերով ապահովված, քանիսն են առանց քնելու տեղերի: Մենք խնդիր ունենք մանկապարտեզները բեռնաթափել: Մեր խնդիրն է նաև մանկապարտեզներում սանիտարական նորմերը պահպանել և ընդունել միայն պահանջվող քանակությամբ երեխաներ»,- պարզաբանեց Ս. Ասրյանը:

Թե որ ներդպրոցական մանկապարտեզ պիտի հաճախի երեխան՝ որոշելու է ծնողը:

Ս. Ասրյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է նաև այլ վայրերում ևս փոքր խմբանոց մանկապարտեզներ բացել: Տեղաբաշխվածությունն ընտրել են այնպես, որ բոլոր թաղամասերում էլ երեխաների ընդունելությունը դպրոցներում այդ նոր ստեղծվող խմբերում կազմակերպվի:

Շինարարական աշխատանքները դպրոցների մանկապարտեզային հարկաբաժիններում կավարտվեն մինչև նոր ուսումնական տարին, հավաստիացնում են պաշտոնյաները: Նոր ուսումնականից ապագա մանկապարտեզի համար դասասենյակներ ազատելու է նաև h. 11 դպրոցը: Սակայն աշխատանքներն այստեղ ավելի կապիտալ բնույթ կկրեն, քանի որ այդ շենքը հետագայում ամբողջովին մանկապարտեզի է տրամադրվելու: Նույնպիսի ճակատագիր սպասվում է h. 6 դպրոցին:

Ինչպես տեղեկացրեց քաղաքաշինության փոխնախարար Արմեն Մկրտչյանը, h. 11 դպրոցը նախագծային փուլում է, և կփորձեն մինչև տարվա վերջը երկու խմբի համար այդ աշխատանքներն ավարտել:

Հ. 6 դպրոցի նախկին շենքն ազատվելու դեպքում ևս կիրականացվեն վերանորոգման աշխատանքներ, և կբացվի նոր մանկապարտեզ, ավելացրեց կրթության և գիտության նախարարը:

Վարչապետ Արա Հարությունյանը եղավ նաև 4-րդ մանկապարտեզի շինհարթակում, որտեղ ապագայում գործելու է մանկապարտեզի 12 խումբ:

Լ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

«Ճամբար-2103»

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԶՈՐԱՎՈՐ ՀԱՅԱՑՔԻ ՆԵՐՔՈ

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումն ուսումնական գործընթացի շարունակությունն է: Ճամբարների արդյունավետությունն այս գործում վաղուց ապացուցված է: Ցավոք, ներկա սոցիալ-տնտեսական պայմանները հնարավորություն չեն տալիս երեխաների հարյուրտոկոսյա ընդգրկվածություն ապահովել ճամբարներում, սակայն ուրախալի է, որ տարեցտարի ընդլայնվում է այդ շրջանակը: Եվ՝ ոչ միայն պետական միջոցներով: Այսօր այդ գործին լծված են նաև մի շարք կազմակերպություններ, որոնք իրենց ներդրումն են բերում երեխաների ամառային հանգստի կազմակերպման հարցում. մեծ թվով դպրոցականներ հանրապետության տարբեր վայրերում իրենց ամառային հանգիստն են վայելում Հայ օգնության միության, Հայ ավետարանչական ընկերակցության, մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված ճամբարներում: Կան երեխաներ, որոնք հանգստանում են Արցախի սահմաններից դուրս՝ Հայաստանի Հանրապետության գեղատեսիլ վայրերում, իսկ Հունաստանում հատուկ կատեգորիաների երեխաների հանգիստն արդեն տարիների պատմություն ունի: Այդքանով հանդերձ, դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը եղել և մնում է կրթական գերատեսչության գլխավոր խնդիրներից մեկը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության շահագրգիռ հետաքրքրության շնորհիվ պետական հովանավորությամբ ճամբարներում հանգստացող երեխաների թիվն աստիճանաբար մեծանում է: Եթե մի քանի տարի առաջ նրանց հանգիստը հիմնականում կազմակերպվում էր դպրոցներին կից, որը, բնականաբար, լիարժեք լինել չէր կարող հենց թեկուզ այն պատճառով, որ նրանք իրենց բնակավայրից դուրս չէին գալիս, և ինչպես ընդունված է ասել՝ օդափոխության չէին ենթարկվում (մի բան, որը բարերար ազդեցություն ունի առողջության վրա), էլ չենք ասում, որ դպրոցից հետո՝ արձակուրդներին նորից դպրոցում լինելը երբեմն անգամ հակառակ արդյունքն էր տալիս, ապա դրանց տեղն աստիճանաբար գրավեցին՝ սկզբում «Վարդանանք» անունով հանգստի, իսկ հետո՝ «Ասպետ» ռազմամարզական ճամբարը:

Արդեն երկրորդ տարին է՝ գործում է նախարարության մյուս հիմնական ճամբարը Գանձասարի վանական համալիրի տարածքում՝ «Գանձասար» անունով, որը հնարավոր եղավ մեծ բարերար Լևոն Հայրապետյանի շնորհիվ, ում ֆինանսական միջոցներով գեղատեսիլ այդ վայրում կառուցվեց բոլոր անհրաժեշտ պայմաններով շենք և դրվեց կրթության և գիտության նախարարության տրամադրության տակ՝ երեխաների հանգիստը կազմակերպելու նպատակով: Այն գործում է ոչ միայն ամառային շրջանում: Այսպես, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի սովորողներն իրենց ուսուցիչների և տնօրեն Աշոտ Բլեյանի գլխավորությամբ արցախցի դպրոցականների հետ ձմեռային և աշնանային արձակուրդներին հատուկ ծրագիր (ձմեռային, աշնանային դպրոց) են իրականացրել այստեղ՝ ակտիվ հանգիստը համադրելով ուսումնական գործընթացի հետ: Այս ամառ Հայ օգնության միությունն է երեխաների հանգիստը կազմակերպել: Իսկ հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 22-ը «Գանձասար»-ը կրթության և գիտության նախարարության անմիջական տրամադրության տակ է, որտեղ չորս հերթափոխով, տասնօրյա ժամկետով կհանգստանան շուրջ 300 երեխաներ: Մեծ մասը՝ առաջին երեք հոսքերում, Ստեփանակերտի դպրոցականներն են: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ քաղաքաբնակ երեխաները հնարավորություն ունենան գոնե մի որոշ ժամանակահատված լինել բնության գրկում:

Հուլիսի 12-ին տեղի ունեցավ ճամբարի հանդիսավոր բացումը, որին ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, նախարարության, Ստեփանակերտի կրթության բաժնի պատասխանատու աշխատողներ:

Երեք ջոկերում՝ «Մարտիկներ», «Ժպիտներ», «Ծիածան» խոսուն անվանումներով, ընդգրկված պատանեկան հասակի տղաներն ու աղջիկները հանդիսավոր տողանի էին շարվել՝ ճամբարի հանդիսավոր բացման կապակցությամբ: Գեղեցիկ բնությամբ շրջապատված և վեհաշուք վանքի աստվածահաճո հայացքն իրենց վրա՝ երեխաներն ու նրանց դաստիարակները ձգտում էին արժանին մատուցել այդ ամենին: Դարեր շարունակ Գանձասարը երազել է նման պահ, և նրա զանգերի մի ղողանջում էլ այսօրվա իրողության երազանքն էր ամփոփված, որ պետական անկախ դրոշը փողփողա այստեղ, թեպետ, ըստ էության, նա միշտ էլ անկախ է եղել, ու երբեք օտարի շունչը չի դիպել նրան՝ շնորհիվ իր քաջ ու անձնուրաց զավակների: Եվ Արցախի պետական դրոշի ներքո զգաստ կանգնած, երբ ջոկի ղեկավարը հատու քայլքով մոտենում է ճամբարի ղեկավարին ու զեկուցում հանդիսավոր տողանին պատրաստ լինելու մասին, վերջինս էլ՝ ճամբարի պետին, նա էլ՝ նախարարին, նրանց խոսքը հնչում էր որպես երդում հայրերի ու պապերի ճանապարհով գնալու, նրանց գործը շարունակելու, հայրենին անառիկ պահելու մասին:

Գանձասարի հոգևոր հովիվ Տեր Գրիգոր քահանան, ով եղել է նաև Արցախյան գոյամարտի անմիջական մասնակիցը, օրհնում է ճամբարն ու նրա բնակիչներին և նրա «Հույս հավատելոց»-ը, իրավ, հավատ է ներշնչում, որ տեսանելի ու աներևույթ թշնամիներից նրանք պաշտպանված են Աստծո զորությամբ և ուսուցիչների աչալուրջ ու զգոն գործունեությամբ, երեխաների կարգապահ վարքով: Այնտեղ, որտեղ ճիշտ գործելակերպն է ու հավատը, ճանապարհն անխոտոր է: Նման պայմաններում նաև ստեղծագործական ուժերն են բազմապատկվում: Եվ պատահական չէ, որ այստեղ գտնվելու ընդամենը մի քանի օրվա ընթացքում ծնվեց «Գանձասար» երգը՝ ձոնված ճամբարին: Երաժշտական ղեկավար Իրինա Փիրումյանը խոստովանեց, որ բառերն ու երաժշտությունը իրենք-իրենց ծնվում են այստեղ: Ճամբարի երգչախմբին էլ շատ ժամանակ պետք չէր երգին տիրապետելու և գեղեցիկ ներկայացնելու համար: Մարդիկ հազարավոր կիլոմետրեր են կտրում, որ հասնեն Գանձասար ու մի քանի պահ ըմբոշխնեն ոչ միայն որպես ճարտարապետական կոթող, այլև՝ նրա տիեզերական, արարչական ուժը, որը վանում է չար ուժերին և կենսաէներգիա հաղորդում: Հապա ինչքա՜ն պիտի ստանան հոգևոր առողջացմամբ, ձեռք բերել միմյանց հետ շփման ընթացքում մարդկային ու ընկերական փոխհարաբերությունների շնորհիվ կյանքն ընկալելու հմտություն, որը դպրոցում ստացած գիտելիքների շարունակությունն է: Եվ իհարկե, նաև երախտագիտություն՝ պետական և մեծ բարերար Լ. Հայրապետյանի միջոցներով մատաղ սերնդին նման նվեր մատուցելու համար:

Ճամբարի պայմաններն ավելի են բարելավվում: Բարեկարգվում է նրա տարածքը, երեխաները հնարավորություն կունենան ոչ միայն շենքի ներսում անցկացնելու իրենց ժամանցը, այլև բացօթյա տաղավարներում: «Իմացեք, որ պետության զարգացման հիմքում ձեր պայծառ ապագայի կերտման խորհուրդն է»,- դիմելով երեխաներին, ասաց նախարարը՝ մաղթելով նրանց հետաքրքիր առօրյա, անմոռաց օրեր, որոնք, անշուշտ, գեղեցիկ հուշ կդառնան նրանց կյանքում:

Օրը տոնական էր ոչ միայն հանդիսավոր բացման արարողությամբ: Կազմակերպիչները ծննդյան օր էլ էին նախատեսել. ճամբարն իր առաջին հոբելյանն էր նշում՝ մեկամյա տարեդարձը: Այն համընկել էր ճամբարական Անի Միրզոյանի ծննդյան օրվա հետ, որին էլ տրվեց տոնական տորթի մոմը փչելու պատիվը:

Ամբողջ արարողությունն ուղեկցվում էր ասմունքով, երգերով, պարերով:

Կենարար օդը, հոգևոր մաքրությունը, հագեցած առօրյան իրենց դրական արդյունքը կապահովեն, անշուշտ, առողջ և լիարժեք սննդի զուգորդմամբ: Ճամբարի պետ Իրինա Օսիպովայի, դաստիարակներ Վերա Ավետիսյանի, Մարինե Հակոբյանի, Իրինա Փիրումյանի, խոհարար Արևիկ Սահակյանի և սպասարկող անձնակազմի մյուս անդամների ջանքերն ուղղված են այդ ամենի զուգադրմանը: Նախարարը շրջեց ճամբարով՝ ծանոթանալու բոլոր պայմաններին և ասաց, որ որևէ խնդիր ծագելու դեպքում անմիջապես դիմեն նախարարություն՝ շուտափույթ լուծում ստանալու:

Հավելենք, որ նախարարությունը օգոստոսին Շուշիում Հայ ավետարանչական ընկերակցության ճամբարում՝ տասնօրյա հանգիստ կկազմակերպի շրջանների դպրոցականների համար:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

ՆԱ ՄԱՐԴՈՒ ՄԵՋ ՄԱՐԴՆ ԷՐ ՏԵՍՆՈՒՄ

Վիգեն Հայրապետյանի ծննդյան 80-ամյակի առթիվ

Հունիսի 15-ին կդառնար 80 տարեկան: Կնշե՞ր, արդյոք, հոբելյանը հանրորեն տեսանելի, մեծ մակարդակով, դժվար է ասել: Ավելի ճիշտ, հակված ենք այն մտքին, որ՝ ոչ, քանի որ 70-ամյակն էլ նշել էր ընտանեկան նեղ շրջանակում, համեստ ձևով: Ճիշտ այնպես, ինչպես ապրել էր ամբողջ կյանքում՝ երբեք իր անձը չառանձնացնելով, իր վրա ուշադրություն չհրավիրելով, ոչ մի պարագայում իրեն ոչ ոքից վեր չդասելով: Այդպես մտածելու պատճառը միայն մտերիմ գործընկերոջ՝ Բահատուր Դավթյանի կարծիքը չէ, որն ասում է. «Նա հեռու էր աղմկարարությունից», այլև շատերի, որոնց հետ զրուցեցի՝ ցանկանալով կերտել իսկական մարդու, մտավորականի, քաղաքացու կերպարը:

Կան մարդիկ, որոնք երբ քայլում են փողոցով, թվում է, փողոցը պայծառանում, շուք ու վեհություն, արիստոկրատ տեսք է ստանում: Այդպիսին էր մեր ակնարկի հերոսը, որի հանգիստ քայլվածքը, մեղմ խոսակցությունը կարծես ուզում էին հետ պահել ժամանակի խելացնոր վազքը:

Վիգեն Սուրենի Հայրապետյան. այր մի ճանաչ, բայց շատերիս՝ անծանոթ:

Ծնվել է 1933թ., Ստեփանակերտ քաղաքում, մանկավարժի ընտանիքում: Ավարտել է հ. 3 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Մանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիի, Ստեփանակերտի երեկոյան, հ. 8 դպրոցներում, եղել նաև վերջինիս տնօրենը: 1984թ. նշանակվել է կրթության Ստեփանակերտի քաղաքային բաժնի վարիչ, 1986-ին՝ ԼՂԻՄ մարզժողկրթբաժնի վարիչ, հետագայում արժանացել «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ» կոչման: 1993թ. անցել է թոշակի: Նախագահել է 1988-ի փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի պատմական նստաշրջանը:

Մանկավարժական և հասարակական-քաղաքական գործունեությունն ամփոփված է այս սեղմ թվերի մեջ, որոնց շուրջ խոսակցությունը կարող է դառնալ ճիշտ ապրելու, ժողովրդին ծառայելու, սերունդ դաստիարակելու, մարդկայնության ու բարոյականության դասագիրք:

Վիգեն Հայրապետյանի ծնողները նույնպես հայտնի մանկավարժներ էին: Հայրը՝ Սուրեն Հայրապետյանը, հանրապետության վաստակավոր մանկավարժ էր, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, յուր ժամանակին գլխավորել է Արցախի կրթական համակարգը: Մայրը՝ Ասյա Հայրապետյանը, դարձյալ հանրապետության վաստակավոր մանկավարժ էր, տարրական դասարանների ուսուցիչ Ստեփանակերտի հ. 2 և 7 դպրոցներում: Վիգեն Սուրենովիչը (այդպես էին միշտ նրան դիմում ծանոթ-անծանոթները) ինքն էլ մանկավարժական ընտանիք է կազմել. կինը՝ Զարա Հայրապետյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և դաստիարակ է աշխատել հ. 5 և 10 դպրոցներում: Երկու զավակներից դուստրը՝ Նաիրա Նաջարյանը, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի փոխտնօրենն է: Քույրը՝ Սվետլանա Հայրապետյանը, այժմ՝ թոշակառու, մաթեմատիկա է դասավանդել Ստեփանակերտի դպրոցներում:

Դուստրը՝ Նաիրան, ասում է, որ ինքը դպրոցում է մեծացել՝ հոր, մոր, հորաքրոջ կողքին: Ընտանիքում զրույցի թեման դպրոցն էր: Ամեն մի երեխայի կյանքը քննարկվում էր նրանց տանը՝ թե լավ, թե վատ սովորող: Հայրն ասում էր, որ վատ երեխա չի լինում, լինում է վատ մանկավարժ: Երբ Նաիրան ընտրեց մանկավարժի մասնագիտությունը, հայրը խորհուրդ տվեց լավ մտածել՝ ասելով, որ մանկավարժը նման է բժշկի՝ գործ ունի մարդու կյանքի հետ, պատասխանատվություն է կրում նրա ճակատագրի համար: Այդ դժվարությունը Նաիրան զգաց ոչ միայն աշխատանքի ընթացքում, այլև դպրոցում սովորելու ժամանակ, որովհետև ինքը… Վիգեն Սուրենովիչի աղջիկն էր: «Ինձ ու եղբորս նստեցնում էր և ասում. «Սա պաշտոն չէ, որը ես զբաղեցնում եմ, դա մեծ պարտականություն է, որովհետև ավելի մեծ թվով մարդկանց համար եմ պատասխանատու: Դուք չմտածեք, թե այդ պաշտոնից պիտի օգտվեք: Ես ուսուցիչ եմ և մինչև վերջ ուսուցիչ եմ մնալու»: Նրա անձնական վարորդը մեր տան մի անդամն էր, բայց երբեք չօգտվեցինք նրա ծառայողական մեքենայից: Ես հպարտ եմ, որ նման հայր եմ ունեցել»,- ասում է մանկավարժ դուստրը:

Նաիրան բոլոր հարցերում կիսվում էր հոր հետ: Հետագայում այդպես էին վարվում նաև իր երեխաները, անգամ ընկերները: Երբ իր տղային հարցրել են՝ ո՞ւմ ես շատ սիրում՝ հո՞րդ, թե՞ մորդ, պատասխանել էր՝ պապիկիս: Երբ Նաիրային ուսմասվար նշանակեցին Ստեփանակերտի ՄՊՍԿ-ում, մի օր հորն ասաց, որ մի ուսուցչի նկատողություն է արել, բայց նա էլի իրենն է շարունակում, ինչպե՞ս վարվել նրա հետ: Ասաց՝ առանձին խոսիր հետը: Հետաքրքրվիր, գուցե նրա ընտանիքում մի պատճառ կա, որը նրան խանգարում է: Այդպես էլ վարվեց, և խնդիրները հարթվեցին:

Վիգեն Հայրապետյանի ամենամեծ զենքը բարությունն էր: Երբեք ձայնը չէր բարձրացնի որևէ մեկի վրա, այնպես նրբանկատորեն նկատողություն կաներ, որ դիմացինն ամաչելուց այլևս նույն սխալը չէր կրկնի: «Ինձ համար շատ դժվար էր նրա աղջիկը լինելը, հանկարծ մի այնպիսի բան չանեի, որ մարդիկ ասեին՝ մի՞թե սա է Վիգեն Սուրենովիչի աղջիկը»,- ասում է Նաիրան:

Պատասխանատվության զգացումը նրա բնավորության առաջին հատկանիշն էր, ուրիշներին աջակցելը՝ ապրելակերպ: Երբ դուստրը ընտանեկան հոգսերից հոգնած մեկ-մեկ տրտնջում էր, հոր պատասխանն այս էր լինում. «Մի՞թե ուրախ չես, որ Աստված այնքան շնորհներ է տվել քեզ, որ կարողանաս ծառայել ընտանիքիդ»: Կամ՝ «Ընտանիքում պարան չեն ձգում, ընտանիքում ապրում են համերաշխ»: Այնտեղ, որտեղ նա լինում էր, խաղաղություն էր տիրում: Պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումը երեխաները նրանից սովորել են մանկուց: Նաև ուրախ մարդ էր, հումորով, հյուրասեր: Նրանց տանն անպակաս էին հյուրերը: Ինչքան էլ զբաղված լիներ, անձամբ էր ստուգում զավակների դասերը, անգամ՝ երաժշտական: Գիտեր երաժշտական տարբեր գործիքներ նվագել: Իսկ երեկոյան նրանց հետ ժամանակ անցկացնել դաշնամուր, ակորդեոն կամ կլարնետ նվագելով:

Նրա այդ հատկանիշները, ինչպես նաև հանդարտաբարո, հանգիստ բնավորության մասին շեշտեցին բոլոր ճանաչողները: Ահա թե ինչպես է Վիգեն Հայրապետյանին բնութագրում նրա երկար տարիների գործընկեր, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Բահատուր Դավթյանը:

- Բանսարկությունից հեռու անձնավորություն էր: Երբեք ընթացք չէր տալիս բամբասանքներին: Կոլեկտիվում տարաձայնություններ, անհամաձայնություններ չէին լինում: Լավ ղեկավար լինելուց բացի, լավ ընկեր էր: Նրա ղեկավար լինելը միայն աշխատասենյակի դռան ցուցանակից էր երևում: Այդ պաշտոնում նա փոխարինել էր Սարգիս Արամյանին, որը նույնպիսի անձնավորություն էր:

Միանձնյա չէր ղեկավարում, բոլորի հետ հարցը քննարկում էր, նոր միայն եզրակացություն գրում: Կադրերի ընտրության հարցում ասում էր՝ տնօրեններն անձրևից հետո բուսած սնկեր չեն, որ ամեն օր փոխես: Այսինքն՝ նրանք պիտի անհրաժեշտ գործընթաց անցնեն, աշխատանքում հմտանան: Բոլորի մեջ նա առաջին հերթին մարդուն էր տեսնում: Թե՛ ինքը, և թե՛ նրանից առաջ՝ Սարգիս Արամյանը, աչքի էին ընկնում մարդկային խորը փիլիսոփայությամբ, մեր ազգային ավանդույթներին տիրապետող ու դրանցով առաջնորդվող: Երբ ինձ նշանակեցին Արցախի պետական համալսարանի ռեկտոր, անհամեստություն չլինի, երբ ինձ ուզում էին ինչ-ինչ հարցերում գովել, ասում էի. «Ես միայն բարձրագույն ուսումնական հաստատություն չեմ ավարտել, նաև Սարգիս Արամյանի ու Վիգեն Հայրապետյանի դպրոցն եմ ավարտել»:

Ինչպե՞ս է ստացվել, որ հենց Վիգեն Հայրապետյանն է նախագահել 88-ի պատմական նստաշրջանը: Բ. Դավթյանի վկայությամբ՝ Արցախյան շարժման օրերին նա շատ ընդգծված ակտիվություն չէր ցուցաբերում աղմկարարության առումով, բայց երբ եկավ ժամանակը, նա իրեն դրսևորեց՝ ինչպես որ հարկն է:

Արցախյան շարժման առաջամարտիկ, բանաստեղծ և գրականագետ Վարդան Հակոբյանի ոչ հեռավոր հուշերում Վիգեն Հայրապետյանը ներկայանում է մարդկային ամենալավ գծերով. «Բավական ներհուն, խորը մտածողության տեր, խոսքի արտաքին էֆեկտներից հեռու, անշառ անձնավորություն էր: Իսկական, տոհմիկ ղարաբաղցի էր: Երիտասարդ տարիներին էլ անգամ նահապետի տպավորություն էր թողնում: Նստաշրջանի գաղափարը հնչեցնողներից մեկը Վ. Հայրապետյանն էր: Երբ պետք էր մտավորականների երկրորդ նամակն ուղարկեինք Մոսկվա, ասաց՝ նստաշրջան անենք ու հարցը դրանով լուծենք»: Նստաշրջանը, ակտիվիստների որոշմամբ, Վ. Հակոբյանը պետք է նախագահեր: Բայց երբ լուր ստացվեց, որ Կրեմլից ռուս ներկայացուցիչներ են եկել Ստեփանակերտ ու նույնպես մասնակցելու են, նախապատվությունը տրվեց ռուսական կրթություն ունեցող մեկին: Հարմար թեկնածու համարվեց հենց Վիգեն Հայրապետյանը, որն էլ շատ լավ կատարեց իր առաքելությունը: «Նա իսկապես արմատական գաղափարների կրող էր, իր սկզբունքին՝ միշտ հավատարիմ: Նրա հետ ցանկացած հարց լուծվում էր շատ արագ և օպերատիվ: Նրան խորթ էին բյուրոկրատական ձևերը, չինովնիկ լինելուց շատ հեռու էր»,- հավելեց Վ. Հակոբյանը:

Թոշակի անցնելուց հետո էլ Վ. Հայրապետյանը կապը չխզեց կրթական համակարգի հետ: Ոչ միայն դստեր կամ ուրիշ դպրոցներից ստացած հրավերներով այցելում էր հանրակրթարաններ, այլև համակարգի պատասխանատուների կողմից ներգրավված էր ոլորտի տարբեր հարցերի լուծման մեջ:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը նրա մասին ասում է. «Վիգեն Սուրենովիչի գործունեությանը ծանոթ եմ դեռ այն ժամանակից, երբ աշխատում էր Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, այնուհետև՝ տնօրեն նույն դպրոցում, հետո՝ կրթության քաղաքային բաժնի վարիչ: Ամենուր նա աչքի է ընկել և՛ որպես լավ մասնագետ, և՛ ղեկավար աշխատանքի փորձ ունեցող: Ամենակարևորը՝ նա կարողանում էր լսել յուրաքանչյուրին, ինքնուրույն որոշումներ կայացնել ի նպաստ կրթության ոլորտի զարգացման: Աշխատելով որպես մարզժողկրթբաժնվար, նա իր կարողություններն անմնացորդ ծառայեցրել է համակարգին, միշտ աչքի է ընկել բարձր պատասխանատվությամբ ու մատչելի անձնավորություն է եղել բոլորի համար: Անկասկած, այն տարիներին ունեցել ենք հաջողություններ, որոնք որոշակիորեն պետք է կապել Վիգեն Հայրապետյանի գործունեության հետ: Նաև այն տարիներին, երբ արդեն չէր աշխատում որպես պատասխանատու պաշտոնյա, դարձյալ եղել է նախարարության ամենահարգված անձնավորությունը, միշտ ընդգրկվել մեր բոլոր խորհրդակցություններում, հանձնաժողովներում: Երբ պետք էր պարգևատրումների ներկայացնել ոլորտի աշխատողներին, անպայման հաշվի ենք առել նրա կարծիքը որպես փորձ ունեցողի ու ոլորտի գիտակի և հարգել որպես մեծ մանկավարժի»:

Նշենք, որ Վ. Հայրապետյանի անունը մտցված է Արցախի հարյուր լավագույն մանկավարժների ցանկը, հայր ու որդի կրում են «Արցախի 20-րդ դարի լավագույն մանկավարժ» տիտղոսը:

Վիգեն Հայրապետյանն ուրախանում էր հանրապետությունում տեղի ունեցող դրական փոփոխություններով: Նոր ջրագիծ են անցկացրել, շենք կառուցել, դպրոց կամ մանկապարտեզ բացել՝ պիտի գնար իր աչքով տեսներ ու գար տիկնոջը, որը առողջական խնդիրներ ունենալով՝ չէր կարողանում տնից դուրս գալ, պատմեր: Երբ որևէ մեկը մոտը բողոքում էր մարդկային որակների բացակայությունից, ասում էր. «Քո մեջ ես տեսնում եմ այդ որակները, իմ երեխաների, հարևանների մեջ նույնպես տեսնում եմ, ուրեմն՝ ամեն ինչ նորմալ ընթացքի մեջ է: Պատերազմներից հետո միշտ այդպես է լինում, կարևորն այն է, որ հիմա հունի մեջ ենք ընկել ու վստահորեն մեր պետականությունն ենք ամրապնդում: Դու քո գործը արա լավ, ամեն ինչ իր տեղը կընկնի»:

Վիգեն Հայրապետյանը Ստեփանակերտի արմատական բնակիչներից էր, հետագայում՝ 2010թ., արժանացավ «Ստեփանակերտի պատվավոր քաղաքացի» կոչման: Նա ուներ մանկության մի ընկեր, որի հետ մեծացել են նույն բակում, սովորել նույն դպրոցում, նույն դասարանում, ավարտել երաժշտական դպրոցի նույն բաժինը, նույն բուհը, աշխատել նույն համակարգում, միշտ եղել իրար հետ: Նա ճանաչված մանկավարժ, հանրապետության վաստակավոր ուսուցիչ Ռաֆայել Գասպարյանն է: Այսօր դժվար է Ռաֆայել Սուրենովիչի համար առանց իր հավատարիմ ընկերոջ, որին տված ամենաբարձր գնահատականն այս է. «Մեր ընկերությունը մաքուր աղբյուրի ջրի նման է եղել: Մենք հարուստ ենք եղել մեր ընկերությամբ: Իրար կես խոսքից հասկանում էինք, միմյանցից ոչինչ չէինք թաքցնում: Բուհում սովորելու տարիներին երկուսս էլ կլարնետ էինք նվագում ինստիտուտի էստրադային նվագախմբում: Համերգներ ենք տվել Հայաստանի տարբեր շրջաններում: Թեկուզ նա հիմա ֆիզիկապես չկա, բայց միշտ հուշերով նրա հետ եմ»:

Վ. Հայրապետյանը չէր սիրում աղմկոտ միջոցառումներ: Միայն մի անգամ ավանդույթը խախտեց, երբ թոռնուհին պիտի ամուսնանար: Դուստրն ասում է, որ պայմանավորվել էին հարսանիքը նեղ շրջանակում անել, նույնիսկ օրը որոշված էր: Ստիպեց օրը փոխել, մեծ, շքեղ հարսանիք անել: Կանչել էր նաև իր բոլոր ընկերներին: Վատառողջ էր, հարսանիքի ժամանակ բոլորը գալիս, հերթով նրա հետ բաժակ էին զարկում: «Հիմա եմ հասկանում, որ նա հրաժեշտ էր տալիս բոլորին: Հարսանիքից վեց օր հետո մահացավ: Կյանքից հեռացավ հանգիստ, ինչպես ապրել էր, առանց որևէ մեկին անհանգստացնելու»:

Վիգեն Հայրապետյանը շատ էր սիրում Թումանյան կարդալ: Նրա մասին ակնարկն էլ ավարտենք մեծ բանաստեղծի խոսքերով.

Ա՜խ, երանի, ով մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ...

Նա հենց այդպիսին էր:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՒՍՊԼԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2013 թվականի հուլիսի «15»-ի
Պետական գրանցման համարը 10513103
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«9» հուլիսի 2013թ. N 165-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ֆինանսատնտեսական բաժնին՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԱՍՐՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2013 թվականի հուլիսի 9-ի
N 165-Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

1.ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ օրինակելի ուսումնական պլաններ), բացառությամբ 7-րդ աղյուսակի, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչներ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող հաստատությունը, օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ, հաստատում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական պլանը:

1. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,

3) օրենքով սահմանված կարգով երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում,

4) օրենքով սահմանված կարգով երաշխավորված մանկավարժական գիտափորձ իրականացնելու համար:

2. Ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Ընդհանրական պարզաբանումներ»-ում,

2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

3. Ուսումնական պարապմունքները հաստատությունում սկսվում են 2013 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում՝ 2014 թվականի մայիսի 23-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

4. Հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է հաստատությունը, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունում՝ հիմնադիրը: Հաստատությունը, յուրաքանչյուր կիսամյակը սկսելուց առաջ, առնվազն տասնհինգօրյա ժամկետում, այդ հարցը համաձայնեցնում է Նախարարության հետ:

5. Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է սույն ուսումնական պլանների հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային համակարգ:

8. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման համակարգերը բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

9. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները, բացառությամբ 10-րդ կետով նախատեսված դեպքի:

10. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում, ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

11. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է:

12. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

13. Ուսումնական տարվա ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ. աշնանային՝ 2013 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, ձմեռային՝ 2013 թվականի դեկտեմբերի 29-ից 2014 թվականի հունվարի 12-ը ներառյալ, գարնանային՝ 2014թ. մարտի 17-ից 23-ը ներառյալ:

14. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տևում են հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 3-ը ներառյալ, ձմեռայինը՝ դեկտեմբերի 29-ից 2014 թվականի հունվարի 26-ը ներառյալ, իսկ գարնանայինը՝ 2014 թվականի մարտի 17-ից մարտի 30-ը ներառյալ:

15. Երկրորդ դասարանցիների արձակուրդները տևում են 2013 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, դեկտեմբերի 29-ից 2014 թվականի հունվարի 26-ը ներառյալ և 2014 թվականի մարտի 17-ից 23-ը ներառյալ:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար վերևում սահմանված արձակուրդների ժամկետներում, հաստատության նախաձեռնության դեպքում, լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ՝ առնվազն 5 օր առաջ համաձայնեցնելով Նախարարության հետ:

17. Հաստատությունը (անկախ ենթակայությունից), դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսների ընթացքում՝ եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում, կարող է նախատեսել մինչև 10 օր տևողությամբ հավելյալ արձակուրդ՝ բաց թողած ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ ենթակայության՝ լիազոր մարմնին և Նախարարությանը՝ 5-օրյա ժամկետում տեղեկացնելու պայմանով:

1) Նախարարության ենթակայության հաստատություններում վերոնշյալ արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև հաստատության կողմից հավելյալ արձակուրդի նախատեսումը կատարվում են Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

2) Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 օր առաջ տեղյակ պահելով Նախարարությանը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ-ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

18. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

☞4

ՈՒՍՊԼԱՆ

3☜

2) Նախարարությունը կարող է երաշխավորել «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ, ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-11-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Բարոյագիտություն» առարկաների ուսուցումը՝ հաստատության կողմից դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության հաստատմանը ներկայացվելու դեպքում:

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարությանը հաստատման ներկայացնելու դեպքում:

Հաստատության տնօրենը ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով հաստատության, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

4) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

5) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է հաստատության ուսպլանում և դասացուցակում:

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը ուսումնական պլանի պետական բաղադրիչում ընդգրկված առարկաներին տրամադրվելու դեպքում դասարանը կիսելու հարցը կարգավորվում է «Հաստատության ուսումնական պլանի ընդհանրական պարզաբանումների» համաձայն: Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ:

19. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում

1) 12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական թեմաների ուսումնասիրությունն իրականացվում է առաջին կիսամյակում:

2) 12-րդ դասարանում ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների խմբային ուսուցման ժամանակացույց:

3) Երկրորդ կիսամյակում քննական առարկաների (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի) կրկնությանը հատկացված ժամաքանակը չի կարող պակաս լինել այդ առարկաներին առաջին կիսամյակում օրինակելի ուսպլանով հատկացված ժամաքանակից:

4) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումը պետք է իրականացվի խմբային եղանակով, շաբաթական 34 ժամ ծավալով՝ յուրաքանչյուր սովորողի համար:

5) Առաջին կիսամյակում համալրված դասարանները, երկրորդ կիսամյակում «Հայոց լեզու և հայ գրականություն» («Հայոց լեզու», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա», («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա» քննական առարկաների դասաժամերին սովորողների ուսումնառությունը շարունակվում է նույն համակազմով՝ որպես մեկ ուսումնական խումբ: Սովորողների ուսումնառության արդյունքները դասամատյանում գրանցվում են ըստ Ուսումնական պլանի՝ 12-րդ դասարանի պետական պարտադիր առարկայացանկի:

6) Բնագիտական առարկայի(ների) դասաժամին տվյալ ուսումնական հաստատության 12-րդ դասարան(ներ)ի բոլոր սովորողները խմբավորվում են ըստ իրենց կողմից ընտրված բնագիտական առարկայի(ների): Նույն սկզբունքով կատարվում է նաև օտար լեզվի խմբի (խմբերի) ձևավորումը:

7) Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է՝ ըստ առարկաների ձևավորված յուրաքանչյուր խմբերի, անկախ սովորողների թվից, հատկացնել շաբաթական միևնույն քանակի դասաժամ:

8) Ուսումնական պլանով նախատեսված ոչ քննական առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են սովորողների առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա:

ա. Քննական առարկաների տարեկան գնահատականները նշանակվում են առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականի և երկրորդ կիսամյակում բանավոր ստուգման, գործնական, գրավոր և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների գնահատականների արդյունքում ձևավորված կիսամյակային գնահատականի միջին թվաբանականի հիման վրա:

բ. Քննական յուրաքանչյուր առարկայից տրվում են ստուգողական աշխատանքներ: Այդ աշխատանքները տրվում են կրկնվող թեմայի, ինչպես նաև մի քանի բովանդակային ամբողջություն կազմող քննական ծրագրային նյութերի ամփոփումից հետո:

գ. Բանավոր ստուգման, գործնական, գրավոր և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների գնահատականները լրացվում են դասամատյաններում:

20. Օտար լեզվի ընտրության կարգ

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներից որևէ մեկը:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ սկսած 5-րդ դասարանից, Նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

3) Հաստատությունը դասավանդվող երկրորդ օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ հաստատության ենթակայության՝ լիազոր մարմնի առաջարկությունները օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում:

4) Նոր հիմնադրված հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն, ըստ հաստատության մանկավարժական խորհրդի և հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների՝ որոշում է Նախարարությունը:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

21. Հաստատության դասարանների միջին խտությունը՝ կրթական երեք աստիճանների համար սահմանվում է 25-30 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, ընդ որում, սովորողների թիվը չի կարող գերազանցել 35-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել հաստատության լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հաշվին՝ հաստատության խորհրդի որոշմամբ:

22. Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» առարկաների դասաժամերին կարելի է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է:

23. Միջին դպրոցում «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է:

«Տեխնոլոգիա» առարկայի պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

24. 10-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և ավագ դպրոցի արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 30 և ավելի է:

25. Անհրաժեշտության դեպքում հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը օրինակելի ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

26. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2014 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

27. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (http://lib.armedu.am) տեղադրված և Նախարարության կողմից երաշխավորված այլ էլեկտրոնային ուսումնական նյութեր:

28. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում:

29. «Համաշխարհային պատմություն» և «Հայոց պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարել նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

30. Հաստատությունում ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով» Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով:

4. ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՍՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

31. Օրինակելի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցում (այսուհետ՝ Ավագ դպրոց) միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական), ընդհանուր հանրակրթական, դպրոցական և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների: Պետական բաղադրիչը ներկայացվում է հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և ընդհանուր հանրակրթական բաղադրիչների տեսքով:

32. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,

2) լրացուցիչ՝ արվեստի, մարզական, ռազմական,

3) ընդհանուր:

33. Ավագ դպրոցի X-XII դասարանների ուսումնական պլանները՝ ըստ հոսքերի տրված են.

1) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում,

2) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում,

3) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում,

4) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (տես՝ Աղյուսակ 1):

34. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2013 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում են 2014 թվականի մայիսի 23-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ:

35. Պետական Ավագ դպրոցում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է Ավագ դպրոցը, իսկ ոչ պետական Ավագ դպրոցում՝ հիմնադիրը:

Ավագ դպրոցը, կիսամյակը սկսելուց առնվազն տասնհինգ օր առաջ, այդ հարցը համաձայնեցնում է Նախարարության հետ:

36. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:

37. Ավագ դպրոցում գործում է գնահատման 10 միավորային համակարգ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող են կիրառվել նաև գնահատման այլ համակարգեր, որոնք բերվում են 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման համակարգերը բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

38. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է:

39. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները, բացառությամբ 44-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

40. Ուսումնական տարվա ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ. աշնանային՝ 2013 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, ձմեռային՝ 2013 թվականի դեկտեմբերի 29-ից 2014 թվականի հունվարի 12-ը ներառյալ, գարնանային՝ մարտի 17-ից 23-ը ներառյալ:

41. Ավագ դպրոցի դասարանների միջին խտությունը ուսպլանի ընդհանուր հանրակրթական ուսուցման առարկաների դասերին սահմանվում է 20-25 սովորող (ընդ որում՝ ընդհանուր հանրակրթական առարկաների դասերին սովորողների թիվը չի կարող գերազանցել 30-ը):

42. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ:

43. Ավագ դպրոցի միևնույն դասարանում ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին դասարանը կարող է բաժանվել խմբերի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավել, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

44. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում

1) 12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական թեմաների ուսումնասիրությունն իրականացվում է առաջին կիսամյակում:

2) 12-րդ դասարանում ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է անհատական և

ՈՒՍՊԼԱՆ

խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների անհատական և խմբային ուսուցման ժամանակացույց:

3) Երկրորդ կիսամյակում քննական առարկաների (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի) կրկնությանը հատկացված ժամաքանակը չի կարող պակաս լինել այդ առարկաներին առաջին կիսամյակում օրինակելի ուսպլանով հատկացված ժամաքանակից:

4) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումը պետք է իրականացվի խմբային եղանակով՝ յուրաքանչյուր սովորողի համար՝ ապահովելով շաբաթական 34 դասաժամ:

5) Առաջին կիսամյակում համալրված դասարանները, երկրորդ կիսամյակում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա» քննական առարկաների դասաժամերին սովորողների ուսումնառությունը շարունակվում է նույն համակազմով՝ որպես մեկ ուսումնական խումբ: Սովորողների ուսումնառության արդյունքները դասամատյանում (12-րդ դասարան) գրանցվում են ըստ ուսումնական պլանի պետական պարտադիր առարկայացանկի:

6) Բնագիտական առարկաների դասաժամերին տվյալ ուսումնական հաստատության 12-րդ դասարանի(ների) բոլոր սովորողները խմբավորվում են ըստ իրենց կողմից ընտրված բնագիտական առարկայի(ների): Նույն սկզբունքով կատարվում է նաև օտար լեզվի խմբի (խմբերի) ձևավորումը:

7) Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների, ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է՝ ըստ առարկաների ձևավորված յուրաքանչյուր խմբին, անկախ սովորողների թվից, հատկացնել շաբաթական միևնույն քանակի դասաժամ:

8) Ուսումնական պլանով նախատեսված ոչ քննական առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են սովորողների առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա:

ա. Քննական առարկայի տարեկան գնահատականը նշանակվում է առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականի և երկրորդ կիսամյակում բանավոր ստուգման, գործնական, գրավոր և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների գնահատականների արդյունքում ձևավորված կիսամյակային գնահատականի միջին թվաբանականի հիման վրա:

բ. Քննական յուրաքանչյուր առարկայից տրվում են ստուգողական աշխատանքներ: Այդ աշխատանքները տրվում են կրկնվող թեմայի, ինչպես նաև մի քանի բովանդակային ամբողջություն կազմող քննական ծրագրային նյութերի ամփոփումից հետո:

գ. Բանավոր ստուգման, գործնական և գրավոր աշխատանքների գնահատականները լրացվում են դասամատյաններում:

45. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը

Հոսքային (խորացված) ուսուցման օրինակելի ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչներից:

ա. Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկա(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակներն՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:

բ. Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչներում ընդգրկված առարկաներն (դասընթացներն) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որևէ որակավորման ձեռքբերմանը:

գ. Դպրոցական բաղադրիչը հոսքային ուսուցման դեպքում ընդգրկում է հետագա մասնագիտական կրթության նախապատրաստման ուղղված ընտրովի առարկաներ, դասընթացներ և յուրաքանչյուր առարկայի (դասընթացի) համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

դ. Ավագ դպրոցն, օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին:

ե. Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:

զ. 10-12-րդ դասարաններում դասարանի շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

46. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ

1) Ընդհանուր հոսքում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ դասարանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի մեջ մտնող առարկաներին, իսկ հոսքային ուսուցմամբ դասարաններում՝ նաև հոսքային ուսուցման առարկաներին:

Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-դասարան), «Գրականագիտություն» (գրականության տեսություն), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (11-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք) (10-11-րդ դասարաններ), «Բարոյագիտություն» (11-րդ դասարան), «Տրամաբանության հիմունքներ» (11-րդ դասարան),«Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-11-րդ դասարաններ), առարկաների ուսուցումը՝ հաստատության կողմից դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարություն հաստատման ներկայացվելու դեպքում:

2) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարությանը հաստատման ներկայացնելու դեպքում:

47. Օտար լեզվի ընտրության կարգ

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

2) Երրորդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու կարելի է դասավանդել հումանիտար հոսքում, ոչ ավելի, քան այդ հոսքում Հոսքային բաղադրիչ 1-ում «Օտար լեզու 1» առարկային տրամադրված ժամաքանակի չափով՝ Նախարարության կողմից համապատասխան ծրագրի և ուսումնական գրականության երաշխավորության հիման վրա:

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում:

4) Նոր հիմնադրված ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն, հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ, որոշում է Նախարարությունը:

48. Սույն օրինակելի ուսումնական պլանի ենթահավելվածի աղյուսակների պարզաբանումներ

1) Ենթահավելվածի Աղյուսակ 2-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ խորացված ուսուցման առարկաներ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը».

գ. «Օտար լեզու1» ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու 2» առարկան, «Ռուսաց լեզու» առարկան ուսումնասիրում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչով սահմանված ժամաքանակով: «Օտար լեզու1» և «Ռուսաց լեզու1» ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու 2» և «Ռուսաց լեզու 2» առարկաները:

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ (տե՛ս 48-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերության պարզաբանումը): Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում ուսպլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները:

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն:

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլանով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 2):

ա. 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է հարակից առարկաների ծրագրով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով.

բ. 11-րդ դասարանում հումանիտար հոսքի ենթահոսքերից յուրաքանչյուրի սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի հարակից առարկաների, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի ծրագրով.

գ. 12-րդ դասարանում բնագիտական առարկաներից սովորողների ուսուցումը շարունակվում է 11-րդ դասարանում նրանց ընտրած բնագիտական հոսքի հարակից առարկայի ծրագրով.

դ. 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0.5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (տե՛ս Աղյուսակ 1):

5) Ենթահավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ խորացված ուսուցման առարկաներ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը».

գ. «3» նշագրումը նշանակում է, որ «Օտար լեզու1» ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու 2» առարկան, «Ռուսաց լեզու» առարկան ուսումնասիրում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչով սահմանված ժամաքանակով:

6) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլանով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 3)՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում ուսպլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկան(երը).

բ. բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ Հոսքային և Ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 4-րդ մասի 46-րդ կետի համաձայն:

գ. եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընտրում է մեկ բնագիտական առարկա, ապա 10-րդ դասարանում Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված մնացած երեք բնագիտական առարկաներից մեկը՝ շաբաթական 2 ժամով, ուսումնասիրում է բնագիտական հոսքի հարակից («Աշխարհագրություն» առարկայի դեպքում՝ ընդհանուր) առարկայական ծրագրերով, իսկ մյուս երկու բնագիտական առարկաները՝ այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում մեկ բնագիտական առարկայի խորացված ուսուցումը շարունակելու դեպքում, մնացած երկու բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրում է այդ առարկայի՝ բնագիտական հոսքի հարակից առարկայական ծրագրով, իսկ մյուսը՝ այդ առարկայի՝ հումանիտար հոսքի ծրագրով. 12-րդ դասարանում մեկ բնագիտական առարկայի խորացված ուսուցումը շարունակելու դեպքում սովորողը կարող է շարունակել ևս մեկ բնագիտական առարկայի ուսումնասիրությունը հարակից առարկայական ծրագրով:

դ. եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընտրում է երկու բնագիտական առարկա, ապա Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված բնագիտական առարկաներից մյուս երկուսը 10-րդ դասարանում ուսումնասիրում է այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում երկու բնագիտական առարկաների խորացված ուսուցումը շարունակելու դեպքում, մնացած մեկ բնագիտական առարկան ուսումնասիրում է այդ առարկայի՝ հումանիտար հոսքի ծրագրով. 12-րդ դասարանում սովորողը շարունակում է խորացված ուսուցմամբ երկու բնագիտական առարկաների ուսումնասիրությունը, իսկ բնագիտական երրորդ առարկայի ուսումնասիրությունը կարող է շարունակել հարակից առարկայական ծրագրով:

ե. եթե սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է այն առարկաները, որոնց ուսուցման համար ուսպլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչով նույնպես նախատեսված է որոշակի ժամաքանակ, ապա այդ ժամաքանակը տրվում է ուսպլանի դպրոցական բաղադրիչին (բացառությամբ՝ Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում «Մաթեմատիկա» առարկայի ժամաքանակի, քանի որ այդ ժամաքանակը ներառված է «Մաթեմատիկա 1» առարկային հատկացված ժամաքանակում)՝ պահպանելով տվյալ դասարանի համար ուսպլանով սահմանված շաբաթական ժամաքանակը:

զ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով.

է. եթե սովորողը 12-րդ դասարանում ուսումնասիրում է «Օտար լեզու 1» առարկան, ապա չի շարունակում «Օտար լեզու 2» առարկային տրված ժամաքանակի շրջանակում նախատեսված համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը: Ռուսաց լեզուն սովորողն ուսումնասիրում է Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Ռուսաց լեզու 2» առարկային տրված ժամաքանակով: Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու 1» առարկան, ապա շարունակում է «Օտար լեզու 2» և «Ռուսաց լեզու 2» առարկաներին տրված ժամաքանակների շրջանակներում նախատեսված համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը.

ը. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել Ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 3):

7) Ենթահավելվածի Աղյուսակ 4-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլանով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 4)՝

ա. 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրերով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրերով.

☞6

ՈՒՍՊԼԱՆ

5 բ. 11-րդ դասարանում սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրով, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրով.

գ. 12-րդ դասարանում բնագիտական առարկաներից սովորողների ուսուցումը շարունակվում է 11-րդ դասարանում՝ նրանց ընտրած բնագիտական հոսքի հարակից առարկայի ծրագրով.

դ. մասնագիտական դասընթացների ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամեր: Ուսպլանի 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ժամաքանակը Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ հատկացվում է ուսումնական պրակտիկայի կազմակերպմանը, պետական պարտադիր առարկաների կրկնությանը և պետական ավարտական քննական առարկաների կրկնությանը.

ե. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել Ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 4):

9) Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 6)՝

ա. Ռուսերենով ուսուցմամբ դպրոցում (դասարանում) «Մայրենի» առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

10) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 7)՝

ա. Ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը.

բ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժհիմնարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ լիազոր մարմնի թույլտվությամբ.

գ. տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն ուսումնական հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը.

դ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուստարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով.

ե. հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ նույն կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական հաստատության կողմից (տե՛ս ենթահավելվածի Աղյուսակ 7):

Ենթահավելված
2013 թվականի հուլիսի 9-ի
N 165-Ն հրամանով հաստատված
օրինակելի ուսումնական պլանների

Աղյուսակ 1

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Ընդհանուր ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	–	–	–	–	–	–
Հայոց լեզու	–	–	–	–	–	–	3	2	2	2	2	2
Գրականություն	–	–	–	–	–	–	2	3	3	–	–	–
Հայ գրականություն	–	–	–	–	–	–	–	–	–	3	3	3
Ռուսաց լեզու	–	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	–	–	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	–	–	–	–	–	–
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	–	–	–	–	–
Վերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	–	–	–	–	–
Ես և շրջակա աշխարհը	–	1	1	2	–	–	–	–	–	–	–	–
Հայրենագիտություն	–	–	–	–	1	–	–	–	–	–	–	–
Բնագիտություն	–	–	–	–	2	2	–	–	–	–	–	–
Աշխարհագրություն	–	–	–	–	–	1	1	2	–	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	–	–	–	–	–	–	–	–	2	–	–	–
Հայոց պատմություն	–	–	–	–	–	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	–	–	–	–	–	1	1	1	1	2	1	1
Հայոց եկեղեցու պատմություն	–	–	–	–	1	1	1	1	1	1	1	–
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	1	1	2	2	2
Հանրահաշիվ	–	–	–	–	–	–	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	–	–	–	–	–	–	2	2	2	1.5	1.5	1.5

Ծանոթություն. Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան N 1 հիմնական դպրոցում 4-րդ դասարանում «Շախմատ» առարկային հատկացնել 2 ժամ՝ 1 ժամը հատկացնել ֆիզկուլտուրա առարկայի ժամաքանակից, իսկ 1 ժամը՝ դասարանի ընդհանուր ծանրաբեռնվածության մեջ ավելացում կատարելով:

Աղյուսակ 2

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկայական	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Հայոց լեզու–1	2	2	3
	Հայ գրականություն–1	3	4	5
	Հայոց պատմություն–1	3	5	8
	Համաշխ. պատմություն–1	3	5	8
	Օտար լեզու–1	3	5	8
	Ռուսաց լեզու–1	3	3	3
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Օտար լեզու–2	2	2	2
	Ռուսաց լեզու–2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1	–
	Մաթեմատիկա (հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Ինֆորմատիկա	1	1	–
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆՀՊ և անվտ. կենսագործ	1	1	–
	Դպրոցական բաղադրիչ	–	–	–
Մնացեալը		34	34	34

Աղյուսակ 3

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկայական	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն) –1	7	8	8
	Ֆիզիկա – 1	4	5	8
	Քիմիա – 1	4	5	8
	Կենսաբանություն –1	4	5	8
	Աշխարհագրություն –1	3	5	8
	Հայոց լեզու –1	2	2	3
	Օտար լեզու –1[3]	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	4
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու–2	2	2	2
	Ռուսաց լեզու–2	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆՀՊ և անվտ. կենսագործ.	1	1	–
	Դպրոցական բաղադրիչ	–	–	–
Մնացեալը		34	34	34

ՈՒՍՊԼԱՆ

Աղյուսակ 4

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Մասնագիտական դասընթացներ[1]		9	13	16.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու-1	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Ինֆորմատիկա և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիա	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 5

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ I-IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	3	4	4	4	4	4	4	4

Աղյուսակ 6

ՌՈՒՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ և անվտ. կենսագործ.	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	-
Ֆիզկուլտուրա	3	2	2	3	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	-	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	1.5	0.5	0.5	1	-	0.5	3.5
Ընդամենը	20	24	26	27	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 7

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց					Ավագ դպրոց		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0,5	0,5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1	1
Քիմիա	-	-	-	-	-	-	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

ԳՐԱԿԱՆ

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՀԱՄՇԵՆԻՑ

(պատմվածք)

Նվիրում եմ մեր անհայտ կորած ազատամարտիկներին, այդ թվում և իմ Նարեկ որդուն

Սկիզբը՝ նախորդ համարներում



Դրսում ինչ-ինչ անսովոր, հառաչանք հիշեցնող կանչեր հնչեցին: Երեքով շուռ եկանք դեպի պատուհանը՝ ականջներս սրած.

- Կուռլո՜ւ-կռլի, կուռլո՜ւ-կռլի, կուռլո՜ւ-կռլի…

- Կռունկներ են,- հուշեց Նորայրը,- հարավ են չվում:

- Մարդը թռչել կարողանար,- Նվերը մի սրտաշարժ հոգոց հանեց:

- Քեզ պինդ պահիր,- Նորայրը կիսաբարձրանալով, համբուրեց նրա ճակատը:

- Չի՛ լինում,- Նվերը մեկեն մղկտաց ու հատակին չոքելով, երեխայի պես գլուխը դրեց հոր ծնկներին: Կարծես մի հանկարծակի ցավ կպավ նրան:- Ինչքա՞ն կարելի է դիմանալ, հայրիկ,- նրա ուսերն անմխիթար վերուվար էին անում անընդհատ:

Ցավալի էր նրան տեսնել այդ վիճակում: Նորայրը տագնապով նայեց ինձ: Նա դժբախտ տեսք ուներ: Ես սոսկումով մտածեցի, որ կարող է պատահել վատթարագույնը, մինչև իսկ խղճի խայթ զգացի, քանզի ես էի այս ամենի պատճառը, բայց Նորայրը, ձեռքը սրտին տանելով ու ջանալով շունչ առնել, ի զարմանս ինձ, իսկույնևեթ վերագտավ իրեն ու բուռն փաղաքշել-շոյելով Նվերի գլուխը, կշտամբեց զուսպ, հայրաբար.

- Դու այլ ճար չունես դիմանալուց բացի: Դու թուլանալու իրավունք չունես: Գեհենը հաղթահարել ու ելքին հասած ուզում ես ինքնակամ պարտվե՞լ ինքդ քեզ: Իմացիր, միայն ուժեղներին է վիճակված փորձության ենթարկվել: Տես՝ Վահան Տերյանն ինչ է ասել.

Իմ տառապանքը ես բախտ եմ հաշվում
Եվ ծիծաղում եմ ձեր բախտի վրա…

- Ա՜խ, հայրիկ,- շնչակտուր մորմոքում էր Նվերը:- Ինչո՞ւ, ախր, ինչո՞ւ այսպես ստացվեց… Ինչքա՜ն դժվար է առանց ձեզ, հայրի՜կ: Շնորհակալ եմ, որ եկար… Քեզ մոտ ես մոռանում եմ իմ սարսափելի կյանքը…

Ռեհանը կիսաբաց դռան մոտ կանգնել, արտասվում էր՝ աչքերը ներքև խոնարհած:

Հեղձուկս կոկորդում՝ ես լուռ բակ իջա, քանի որ իմ մխիթարական խոսքերն ավելորդ էին:

Աշնանային զով, պարզկա գիշերը վաղուց կիսվել էր: Ծառերից խեժի հոտ էր գալիս: Ինչ-որ տեղից փարոսը պահ առ պահ լույս էր սփռում նրանց երկնաձիգ կատարներին: Արդարացի լինելու համար ասեմ, որ ես էլ նախանձելի վիճակում չէի. անհուսության նման ինչ-որ բան էր համակել ինձ, և այն թոթափելու նպատակով երկար մնացի դրսում: Երբ աչք ածեցի շուրջս, նկատեցի, որ դիմացի հաստաբուն ծառի մոտ մի շուն էր նստած: Գլուխը բարձրացրել՝ ինձ էր նայում: Մեքենաբար ոտքս գետնին խփեցի: Նա թույլ գռմռաց ու տեղից չշարժվեց: Երկու ուրիշ շուն քիչ հեռվից էին նայում: Նորից մի շարժում արեցի, բայց նրանք շարունակեցին մնալ նույն դիրքում: Ես հասկացա, որ ինձնից չեն վախենում, և այդ մտքից մի լպրծուն տհաճություն պարուրեց մարմինս՝ ծայրեծայր:

Երբ վերադարձա, Նորայրն իրենց ընտանիքի մասին էր պատմում: Նվերը հանգիստ, անխռով լսում էր, երբեմն-երբեմն հարցեր տալիս:

- Կարծես երազում եմ,- շշնջաց նա:

- Ինձ էլ է այդպես թվում,- Նորայրը նույնպես կամացուկ պատասխանեց:

- Արմենուհին ինչպե՞ս է,- մի փոքր վարանելուց հետո հարցրեց Նվերը փոխված ձայնով:

Չնայած մենք սպասում էինք այդ հարցին, Նորայրը, չգիտես ինչու, ընկրկեց, ու ես պատասխանեցի.

- Ուղիղ յոթ տարի սպասել է քեզ…

- Իսկ դու ճարտարապետի դիպլոմդ թողած՝ վարորդությո՞ւն ես անում,- ընդհատելով ինձ՝ նա գիտակցաբա՞ր, թե՞ ակամա շրջեց զրույցի թեման:

- Հիմա ո՞վ է դիպլոմին նշանակություն տալիս, մանավանդ, եթե այն իսկական է: Հիմա գնված դիպլոմներն են հեղինակություն վայելում,- ասացի՝ մի բան ասած լինելու համար:

- Անցյալ անգամ ինձ քո այդ սպին էր շփոթեցրել, այլապես կճանաչեի քեզ, թեև լրիվ ճաղատացել ես: Այն միանգամայն փոխել է դեմքդ:

- Կռվի հետքն է, Նվեր ջան,- ես բնազդաբար ձեռքս քսեցի այտիս:

Ապա նա հետաքրքրվեց իր մոտիկ ընկերներով:

- Արմենը բանակում սպա է,- ասաց Նորայրը,- հիմա Երևանում է ծառայում: Ամեն անգամ քո ծննդյան օրը զանգում է:

Նվերը զգացված շարժվեց տեղում:

- Ով խփվի՝ դավաճան է,- սա Արմենի, իմ ու Տիգրանի նշանաբանն էր,- ասաց նա:

- Տիգրանը Ռուսաստան է տեղափոխվել,- ասացի ես,- Դավիթն ու Արամը՝ նույնպես:

- Ինչո՞ւ:

- Հացի խնդիր է… Մանուկը, Ռազմիկը, Սամվելը զոհվել են:

- Ափսոս, հրաշալի տղերք էին,- Նվերը հայացքը ցած գցեց:- Իսկ Լենսե՞րը, որ Ռուսաստան էր փախել:

- Կռվից հետո վերադարձել ու հիմա խոշոր գործարար է: Իմ այս ԿամԱԶ-ը նրանն է: Վարձով եմ բանեցնում:

- Ո՜վ կռվի, ո՜վ վայելի,- Նորայրը դառնացած օրորեց գլուխը:

- Ինչո՞ւ է այդպես,- զարմանքով հարցրեց Նվերը:

Մենք լուռ էինք: Պատասխան չունեինք:

- Շուտով կլուսանա, ինձ թույլ տվեք մի քանի ժամով գնալ ննջել մեքենայի մեջ: Երկար ճանապարհ պիտի գնանք,- ասացի ես ոչ այնքան իմ հանգստանալու անհրաժեշտությունից ելնելով, ինչքան նրանց մենակ թողնելու համար:

* * *

Առավոտյան, բեռը ստանալուց հետո, լողլողը,- նա էր պահեստի պատասխանատուն,- մեզ հաճելի նվեր մատուցեց՝ ասելով, թե ինքը գյուղում կարևոր գործ ունի, և փաստաթղթերը ձևակերպելու համար մեզ հետ Նվերը (ինքը, հարկավ, Նաթիգ ասաց) պիտի Խոփա՝ գրասենյակ գա: Այդ խոսքերից հետո, բաժանման պահին ես ու Նորայրն այնպես սիրալիր սեղմեցինք նրա ոսկրոտ ձեռքը, որ երկար ժամանակ շնորհակալական ժպիտը չէր իջնում միշտ ինչ-որ տեղ շտապող այդ մարդու ձվաձև դեմքից:

Դարպասին մոտենալով, երեքով ինքնաբերաբար նայեցինք տան կողմը: Ռեհանն ու փոքրիկ Գոհարը պատուհանի ետևում կանգնած, ձեռքերն անհամարձակ տարուբերելով, բարի ճանապարհ էին մաղթում մեզ:

- Չգիտեմ՝ գիտե՞ս, թե՞ չէ,- Խոփայի ճանապարհին Նվերին դարձավ Նորայրը,- ես ու մայրիկդ մի քանի տարի երեխա չէինք ունենում: Հետո դու ծնվեցիր: Մայրս՝ քո տատը, որ երազում էր տղա թոռնիկ ունենալ և օրն ի բուն աղոթք էր անում, ասաց՝ այս երեխան Տիրոջ նվերն է, Տերն է ուղարկել մեզ … Եվ քեզ այդպես էլ կոչեցինք՝ Նվեր:

- Տանը իրո՞ք հավատում էիք, որ ես ողջ եմ,- հարցրեց Նվերը:

- Իհարկե, հավատում էինք,- պատասխանեց Նորայրը խանդաղատանքով,- մայրդ այդ հավատով է ապրում:

- Այդ հավատն է, ուրեմն, օգնել ինձ կենդանի մնալու…

Խոփայում շատ զուսպ, ճիշտ կլինի ասել՝ շինծու սառնությամբ հրաժեշտ տվինք միմյանց (փողոցը լիքն էր մարդկանցով): Նորայրի ու Նվերի մշուշված հայացքներում խնամքով քողարկված խոնավ փայլ նկատեցի:

Գորշ, անարև օր է: Թեթև անձրև էր շաղում: Ամպերն առաջկտրուկի էին տալիս երկնքում: Ծովը փոթորկում էր, ճոճելով ափամերձ կառանված ձկնորսական մակույկները, որոնց վերևում անդադրում, նյարդայնորեն թևածում էին ծովաորորները: Երբ Սարփին հետևում մնաց, քամին դադարեց, ամպերը ցրվեցին, ծովը խաղաղվեց ու վերստացավ իր բնական՝ կապույտ գույնը:

Նորայրը լուռ էր: Նա սաստիկ հոգնած տեսք ուներ: Հսկայական ծաղկեփունջը, որ թանձրաբույրով լցրել էր խցիկը, խնամքով ծնկներին առած՝ ոչ այն է՝ նիրհում էր, ոչ այն է՝ խորասուզվել էր մտքերի մեջ: «Երևի անքնությունից է,- մտածեցի,- գիշերը աչք չեն փակել ինքն ու Նվերը»:

- Գիտե՞ս ինչ հիշեցի,- խոսեց նա, երբ արդեն վրաց հողում էինք:- Շատ տարիներ առաջ, երբ մեր երեխաները դեռ փոքր էին, երազում իմ հանգուցյալ մորը տեսա: Եկել, բակից ձայն էր տալիս՝ Նորա՜յր, Նորա՜յր, ձեր տան առաջին դժբախտությունը Նվերի հետ է պատահելու… Ասել է ու չքացել:

Մարմնովս սարսուռ անցավ, չգիտեի ինչ պատասխանել: Փոքր-ինչ մտորելով ասացի.

- Փառք Աստծո, դժբախտությունը ետևում է մնացել:

- Դու այդպե՞ս ես կարծում,- Նորայրը խոր հոգոց հանեց,- իսկ չէ՞ որ դեռ անորոշ, եթե չասենք՝ կասկածելի է նրա ապագան:

- Ինձ թվում է՝ ամերիկացին մի բան կձեռնարկի: Նվերն ասաց, որ նրա նախատատը Զմյուռնիայից էր: Բացի այդ, նա շատ գոհ է Նվերից:

- Ես կանխավ հենց այդ մտքով եմ ինձ մխիթարում: Նաև նրանով, որ Ռեհանը պարկեշտ անձնավորություն է, Նվերին անսահման նվիրված: Տես՝ ինչ սիրուն ծաղիկներ է ուղարկել մորաքրոջդ:

- Հա, շատ բարի ու զգայուն հոգի ունի,- ասացի,- ինչպե՞ս հրաժեշտ տվեց:

- Դարձյալ համբուրեց ձեռքս: Քաշվելով, ամաչելով ասաց՝ երանի մենք էլ գայինք ձեզ հետ, հայրիկ: «Այստեղ մի՞թե վատ է»,- հարցրի: «Չէ,- ասաց,- Նվերի համար եմ ասում, ձեր բոլորի կարոտը շատ է քաշում»,- ու լաց եղավ:- Նորայրը կրկին հոգոց հանեց, քիչ հապաղելով՝ փորձեց տիրապետել իր ձայնին:- Վզիս շղթան նվիրել եմ նրան: Նաև մի փոքր գումար տվի զոռով, ասացի՝ թոռնիկիս համար նվեր կգնեք իմ անունից:

- Լավ բալիկ է Գոհարիկը:

- Այո,- Նորայրը քաղցր ժպտաց և կարճ դադարից հետո ավելացրեց,- բայց գիտե՞ս, թե ինչքան խորթ ու անբնական է, երբ թոռնիկդ հետ առնչվում ես ինչ-որ օտար լեզվով:- Զգացի, որ չուզեց ասել՝ թուրքերեն:

- Հավատա, հայերեն անպայման կսովորի,- վստահ ասացի:- Ինչո՞ւ ես մոռանում, որ Կոմիտասն էլ մանուկ հասակում թրքախոս էր:

Իմ այս խոսքը ներգործեց: Նորայրը՝ ուսիս մտերմիկ խփելով, մի փաղաքուշ նայվածք նետեց ինձ: Այնուհետև սկսեց պատմել համշենահայերի մասին, որոնք վաղնջական ժամանակներից համատարած բնակվում էին Սև ծովի հարավ-արևելյան ափամերձ շրջաններում, Ալիս գետից մինչև Ճորոխ: Թուրքերը նրանց մի մասին բռնի մահմեդականացրել են, մի մասն էլ փախել, բնակություն է հաստատել Աբխազիայում ու Կրասնոդարի երկրամասում՝ Սոչիի և Տուապսեի մերձակայքում: Նրանց ընդհանուր թիվն աշխարհում կես միլիոն է: Հազարավոր մահմեդական հայեր ապրում են Ուզբեկստանում, Ղազախստանում, Կիրգիզիայում: Սրանց Ստալինն էր աքսորել Աջարիայից:

- Թուրքիայում,- շարունակեց Նորայրը,- այժմ 200 հազար համշենահայ է ապրում, ու հազիվ 30 հազարն է խոսում հայերեն՝ Համշենի բարբառով: Միայն Խոփայի գավառում համշենցիների երեք տասնյակ գյուղ կա: Բուն Խոփայում նրանք մեծամասնություն են կազմում, զգալիորեն գերազանցելով լազերին: Բոլորը չէ, որ գիտեն իրենց ծագումը: Շատերը թաքցնում են ազգությունը, իրենց ոչ թե հայ կամ համշենահայ, այլ համշենցի անվանելով՝ անվտանգության նկատառումով: 21-րդ դարում էլ հայի հանդեպ, և առհասարակ, թուրքը նույն թուրքն է մնում:

- Նվերի զավակները հազիվ թե անտարբեր մնան մայրենի լեզվի նկատմամբ,- ես ջանում էի ամեն կերպ սփոփել Նորայրին:- Նվերն ասաց՝ եթե հաջորդը տղա ծնվի, անունը Նորայր ենք դնելու:

- Ճի՞շտ,- Նորայրն իր թախծաժպիտ հայացքը դարձրեց ինձ, ու ես տեսա, որ խինդախառն մի փայլ առկայծեց նրա աչքերում:- Ինչ ես կարծում, էլի՞ կհանդիպենք:

- Ինչո՞ւ չէ,- նրան չէի ուզում վշտացնել,- սակայն՝ մի առ ժամանակ հետո: Զգուշության համար:

Նա չգիտեր, որ Նվերը պատվիրել է՝ եթե ձեզ համար թանկ է իմ կյանքը, խնդրում եմ այլևս չգալ, պատեհ առիթ լինելու դեպքում ինքս ինչ-որ ձևով կտեղեկացնեմ ձեզ…

Այդպես՝ կարծիքներ փոխանակելով, միմյանց հետ կիսելով մեր տպավորություններն ու մտածումները, հետզհետե, առանց դժվարության հաղթահարում էինք երկար ու ձիգ ճանապարհը, և աստիճանաբար բացվում, ինքնավստահ էր դառնում Նորայրի դեմքը. կնճիռներն ասես հարթվել էին: Աղավնո գյուղի մատուռի կողքով անցնելիս նա խոնարհաբար խաչակնքեց երեսը՝ ինչ-որ շշնջալով: Նույնն արեց և Բերձորի եկեղեցու մոտ: Երբ Ստեփանակերտ մտանք, նրա դեմքը, կարելի է ասել, ուղղակի փայլում էր, աչքերը շողշողում՝ տուն դարձող ուխտավորի պես: Անճանաչելի էր դարձել Նորայրը, և դա ուրախացնում էր ինձ:

- Խոստանո՞ւմ ես, որ մեր գաղտնիքը երկուսիս մեջ պիտի մնա միայն,- նրանց տուն բարձրանալիս, աստիճաններին ո՜րերորդ անգամ խստորեն հարցրեց և պատասխանի չսպասելով, ծաղկեփունջը գրեթե խլելով իմ ձեռքից, հապշտապ, երիտասարդական ավյունով հինգերորդ հարկ ելավ: Զանգի կոճակը սեղմելիս ինձ աշխույժ աչքով արեց: Նա բոլորովին իր նման չէր:

Դուռը բացեց Գոհար մորաքույրը՝ իրեն հատուկ սրտաբուխ ժպիտով: Հենց շեմին ծաղկեփունջը կնոջը տալով ու թռուցիկ պատասխանելով նրա հարցերին, Նորայրը վազ հյուրասենյակ մտավ: Մենք հետևեցինք նրան: Նորայրը կանգնել, Նվերի՝ պատի մեծադիր նկարին էր նայում ակներև հետաքրքրությամբ, ասես առաջին անգամ էր տեսնում:

- Նվերը ողջ է,- հանկարծ բացականչեց նա՝ դեմքին մի առեղծվածային, երջանիկ ժպիտ խաղացնելով:

Ես վախեցած նայեցի նրան:

- Ի՞նչ,- անհանգիստ հարցրեց Գոհար մորաքույրը, հայացքը տարակուսանքով Նորայրից ինձ դարձնելով:

Ես, թուքս հազիվ կուլ տալով, ուսերս թոթվեցի, իսկ Նորայրը, ուղիղ նայելով կնոջ երեսին, նույն տոնով կրկնեց.

- Նվերը ողջ-առողջ է…

Հաջորդ ակնթարթին ժպիտը մարեց նրա շուրթերին, ջղածգորեն շունչ քաշեց և շանթահար եղածի նման ցնցվեց մարմնով մեկ ու ձեռքը սրտին սեղմած՝ փլվեց բազմոցին: Նա ընդհատումներով էր շնչում, օդը չէր հերիքում: Խեղճ մորաքույրս անսպասելիությունից իրար էր անցել: Ես անմիջապես հավաքեցի շտապ օգնության հեռախոսահամարը: Բայց ուշ էր արդեն: Ամեն բան շատ արագ կատարվեց: Ինձ համար չափազանց դժվար է խոսել այդ մասին: Հավելեմ միայն, որ Համշենից բերած ծաղիկները դրեցինք նրա շիրմաթմբին: Սպիտակ ու ոսկեդեղին քրիզանթեմներ էին՝ խոշոր պսակաթերթերով:

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 15.07.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: